

Գրանք հարմար են միայն վերնագրերի և ենթավերնագրերի համար: (ավելիներ են ձևագրերի սկզբի և վերջի տողերը տրվել են տեքստերի համար, բնագումարը սովորական՝ սպիտակ տառերով):

Հատորում գեղեցիկ են մանրանկարչության տեսակետից առավել հետաքրքիր ձևագրերից հանված 38 մեծագիր նկարներ, դրանցից 4-ը անհաջող գունավոր պատճենահանումների ներդրված են՝ տպված լիտոգրաֆիական ստվար թղթի վրա: Անհամեմատ ավելի հաջող են և ձևագրերի մանրանկարների վարպետության բարձր աստիճանի մասին ավելի նշգրիտ պատկերացում են տալիս գրքին հատկացված կամահաստ թղթի վրա սովորական սև ներկով

տպված նկարները, որոնք մեծ մասամբ վերցված են կլասիկների դիվաններից (Հաֆեզ, Նիզամի, Ֆուզուլի, Նավայի և այլն):

Ազրերեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձևագրական ֆոնդի աշխատակիցների ջանքերով, ֆոնդի ղեկավար Մ. Սուլթանովի գեղավարությամբ և պրոֆ. Հ. Արասլիի խմբագրությամբ հրատարակ հանված ձևագրաց ցուցակի գրախոսող հատորը գալիս է վկայելու ձևագրերի համաքման և ուսումնասիրության բնագավառում Ազրերեջանում վերջին տարիների բնթացքում ձեռք բերված հաջողությունների մասին:

Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

Լ. Բ. ԱՂԱՅԱՆ. Գրարարի քերականություն. հատոր 1. Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն. Երևան, 1964. 362 էջ:

Հայկական ՍՍՌ ԴԱ թղթակից անդամ. պրոֆեսոր է. Աղայանի «Գրարարի քերականությունը» հեղինակի երկհատորանոց աշխատության առաջին հատորի I գիրքն է, որ նվիրված է գրարարի հնչյունաբանությանը:

Առաջարանի մեջ հեղինակը գրում է, որ ինքն աշխատության առաջին հատորը բաժանում է չորս գրքի՝ ա) Հնչյունաբանություն, բ) Զևարանություն, գ) Շարահյուսություն, գ) Բառագիտություն, իսկ երկրորդ հատորում նախատեսում է քննել գրարարի շրջանաբաժանման և «նրա ու ժողովրդական լեզվի փոխհարաբերությունները» հարցերը «իրեն նախապատրաստություն պատմական ուսումնասիրության»: Այսպիսով պարզվում է մի ընդարձակ ծրագիր մեր լեզվի բազմակողմանի ուսումնասիրության, որի միայն առաջին մասն է այս հրատարակված գիրքը:

Ուսումնասիրելով հայ հին մատենագրության լեզուն և միաժամանակ օգտագործելով գրարարի վերարերյալ հայ և օտարազգի լեզվաբանների հետադոտությունների արդյունքները, հեղինակն իր գրքում նկարագրելու ու բացատրելու է դասական գրարարի հնչյունական և ուղղագրական երևույթներն իրենց մանրամասնություններով: Գրքում կատարված է խստագույն ընտրություն. մեղ ավանդված լեզվական փաստերի միջից զատված են ուշ շրջանի կամ բարբառային երևույթները և քննության են ենթարկված միայն V գրքի առաջին կեսի (դասական գրարարի) հնչյունական երևույթներն իրենց սկզբնական կայուն վիճակում, որով հե-

ղինակը տվել է այդ շրջանի համաժամանակյա (սինխրոնիկ) ուսումնասիրությունը:

Գրքի հիմնական նյութը բաժանված է 5 գլխի: Առաջին գլխում («Ընդհանուր հիմունքներ») բացատրված են այն ընդհանուր սկզբունքները, որոնցով հեղինակը կատարում է գրարարի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը: Այդ սկզբունքները հիմնված են լեզվաբանության մեջ կիրառվող նորագույն, մասնավորապես հնչույթաբանական վերլուծությունների ժամանակակից մեթոդների վրա. իր այդ ուղղությամբ գիրքը նորություն է հայ լեզվաբանական գրականության մեջ: Տալով հնչույթի բնորոշումը և նկարագրելով հնչույթաբանական վերլուծության մեթոդը լեզվաբանական միավորների (բառերի) հակադրության միջոցով՝ հեղինակը հող է նախապատրաստում լեզվական նյութի կոնկրետ վերլուծության համար:

Գրքի ամենածավալուն բաժինն է երկրորդ դուխը («Գրարարի հնչույթային համակարգը»), որտեղ բառերի իր բացատրած հակադրության միջոցով (տառ-տար, առու-արու) հեղինակը որոշում է, թե ինչ հնչույթներ է ունեցել դասական գրարարը: Վերլուծությունների մեջ հեղինակը ելնում է բառերի գրաբարյան ավանդական ուղղագրությունից, ընդունելով, որ «իրեն ընդհանուր կանոն մեթոդային գրի մեջ ամեն մի հնչյուն արտահայտվում էր մեկ տառով» իսկ դեպքերում, յուրաքանչյուր տառ ուներ միայն մեկ արտասանություն» (էջ 354): Հնչույթաբանական վերլուծությունների հիման վրա հեղինակը, իրեն վերջնական եզրակացություն,

գլխավորի համար ընդունում է 35 պարզ հնչույթ, որ համապատասխանում է մետրոպոլիտանի տառերին՝ հանած Վ-ը, որ որպես բաղաձայն միանում կամ նույնանում է վ-ի հետ (ծով, նա) որպես նրա ենթահնչույթ, իսկ որպես ձայնավոր (բաղաձայնական ձայնավոր, երկրարժանի անվանկային բաղադրիչ)՝ ու-ին (նուադ, տաւն)։ Այս 35 հնչույթներին հեղինակը գումարում է 10 երկրարժան, 5 եռարժան, մեկ երկրարժանակերպ (է) և մեկ եռարժանակերպ (ուէ)։

Այս դիտում հետաքրքիր է մի քանի երկրարժանների քննությունը։ Ելնելով այն հանգամանքից, որ աւ, իւ հնչյունակապակցությունները տարբեր դիրքերում տարբեր տեսակի պատմական հնչյունափոխության են ենթարկվել, հեղինակը, հակառակ Աճառյանի տեսակետի, V դարում էլ դրանց տարբեր դիրքերի համար տարբեր արտասանություն է ենթադրում (էջ 118) և եզրակացնում է. «Այսպիսով, ինչպես աւ, այնպես էլ ու կապակցությունը երկրարժան է բաղաձայնից առաջ, իսկ ձայնավորի ու ձայնորդի կապակցություն է բառավերջում և ձայնավորից առաջ» (էջ 122)։ Ըստ հեղինակի ՈՒ և Ի հնչույթներից յուրաքանչյուրը երեքական ենթահնչույթ է ներկայացրել, ուստի և գրվել է 3 տառով ՈՒ=ու (ձայնավոր՝ տուն), վ (բաղաձայն՝ վագել) և Վ (ձայնորդ, երկրարժանի բաղադրիչ, որ բարձրացող երկրարժանների մեջ գրվել է ու տառով՝ նուստ, իսկ իջնող երկրարժանների մեջ՝ տառով՝ տաւն), իսկ Ի=ի (ձայնավոր՝ սիրտ), յ (բաղաձայն՝ աղայաթ) և ի (ձայնորդ, երկրարժանի բաղադրիչ, որ բարձրացող երկրարժանների մեջ գրվել է Ն տառով՝ սենեակ, իսկ իջնող երկրարժանների մեջ՝ յ տառով՝ ձայն)։ Այս տեսակետով ստացվում է շեղում մետրոպոլիտան ուղղագրության մեջ մեկ հնչույթը բոլոր դեպքերում մեկ տառով գրելու սկզբունքի մեջ, քանի որ սենեակ բառի Ն-ը և ձայն բառի յ-ն (տարբեր նշանագրեր) հեղինակը նույնական է համարում և՛ որպես հնչույթ, և՛ որպես ենթահնչույթ (էջ 91, 191, 355—356)։ Նմանապես նա նույնական է համարում ուա և աւ երկրարժանների (նուադ, տաւն) ու և Վ բաղադրիչները (էջ 189, 356)։ Միևնույն ենթահնչույթի տարբեր տառերով գրվելը հեղինակը բացատրում է ուղղագրական հանգամանքներով և ուղղագրությանը նվիրված բաժնում նշում է, որ միևնույն անվանկային ի-ն իջնող և բարձրացող երկրարժանների մեջ գրվել է տարբեր տառերով իբրև սկզբունք, տարբեր տառերով է գրվել նաև անվանկային ու-ն Բայց այս դեպքում մոթ մնում հետևյալ հարցը. եթե սենեակ բառի Ն-ն նույն անվանկային յ-ն էր, ինչ որ ձայն բառի յ-ն, ապա

ինչու մետրոպոլիտան ուղղագրությամբ, որ ընդունել էր միևնույն հնչույթը բոլոր դեպքերում նույն տառով գրելու սկզբունքը, չեն գրել նույն տառով՝ սենեակ, ինչպես գրել են աւայադ, աւայաուակ, կամ նույն Ն տառով՝ ծաւն, մինչդեռ սրան հակառակ, ըստ հեղինակի՝ տարբեր ենթահնչույթները բաղաձայն յ-ն (աղայաթ) և անվանկային ձայնավոր յ-ն (ձայն) գրել են նույն տառով։ Նույնը վերաբերում է նաև անվանկային ու ձայնավորին, որ ըստ հեղինակի տարբեր տառերով է գրվել։ Այս կապակցությամբ խոսելով հեղինակը «տարօրինակ շեղում» է համարում այն հանգամանքը, որ և վերջավորվող բառերի հոլովման մեջ գրվում է Վ տառը՝ որդույ, Բը սկզբունքից ելնելով, Մեսրոպն այստեղ էլ պետք է գրեր ու (որդույ, թագուհույ, և ոչ թե որդույ, թագուհույ)» (էջ 356—357), որովհետև ուրիշ դեպքերում այդպես է գրվում՝ անիւ-անույ, պատիւ-պատույ պատուական և այլն։ Բայց այս դեպքում Վ-ը և ու-ն տարբեր աղբյուրներից են ծագում. Վ-ը առաջանում է բառավերջի ի-ից՝ որդի-որդույ, իսկ ու-ն՝ իւ կապակցությունից՝ անիւ-անույ։

Հնչույթային համակարգի վերլուծությունն սկսվում է գրաբարի հնչույթների տարբերակիչ հատկանիշների նկարագրությամբ, որը լրացված է ձայնավորների, ձայնորդների ու բաղաձայնների առանձին տախտակներով, ապա պարզված է ենթահնչույթների (հատկապես ՈՒ-ի և Ի-ի) հարաբերությունը։

Գրքի երկրորդ գլխում («Հնչյունախոսություն») քննարկված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հնչույթների արտասանական առանձնահատկությունները, գործածության ոլորտները, վանկը, շնչորդ, ելնելավորումը (ինտոնացիա) և այլն, տրված են գրաբարի ձայնավորների, երկրարժանների և բաղաձայնների տախտակներն ըստ արտասանական առանձնահատկությունների։

Բառավերջի և բառասկզբի վերաբերյալ բաժնում մի քանի կարևոր կանոնների մեջ ամփոփված են այն հնչյուններն ու հնչյունակապակցությունները, որոնցով կարող են սկսվել և վերջանալ դասական գրաբարի բառերը։

Բը վերլուծություններից ելնելով հեղինակը եզրակացնում է, որ «դասական հայերենում թեկուզ և երկու բաղաձայնով սկսվող (ոչ թե գրությամբ, այլ արտասանությամբ) և ոչ մի բառ չկա» (էջ 239)։

Հետաքրքիր է այս բաժնում հեղինակի բերած վիճակագրական տախտակը, որի մեջ ներկայացված են երկու բաղաձայնանիշ տառերով գրվող այն բոլոր կապակցությունները, որոնք հանդիպում են բառասկզբում և որոնց մեջ արտասանվել է ըստ նման սպառիչ ձևով նկարա-

գրված են նաև բառավորչի նշյունակապակցությունները, որոնք ամփոփված են 7 կանոնների մեջ:

Վանկի վերաբերյալ բաժնում բացատրված են վանկատման կանոնները. այսինքն, թե բառակազմում, բառամիջում և բառավերջում ձայնավոր ու բաղաձայն նշյուններն ինչպիսի վանկեր են կազմում և ինչպես են բաշխվում տարբեր վանկերի վրա, որոնց ի լրումն ցույց են տրված նաև վանկերի տեսակները՝ գրաբարում՝ «երկրաց կամ մենանշույթ վանկ (a) նախափակ երկնշույթ վանկ (ba), վերջափակ երկնշույթ վանկ (ab), վերջափակ եռանշույթ վանկ (arb, asb), երկփակ եռանշույթ վանկ (bab), վերջափակ քառանշույթ վանկ (barb), (basb, barl)» (էջ 262), ընդամենը 6 տեսակ վանկ: Վանկի վերջին նշույթների մասին իբրև ընդհանուր կանոն նշված է. «Վանկը կարող է փակվել այնպիսի բաղաձայնների կապակցությամբ, որոնցով կարող են վերջավորվել բառերը» (էջ 262): Վանկերի թվի, տեսակների, ինչպես և նշույթների հաճախականության վերաբերյալ առավել կոնկրետ գաղափար են տալիս այն տախտակները, որ հեղինակը կազմել է Եզնիկի, Բյուզանդի և Աղաթանգեղոսի գրքերից վերցրած փոքր հատվածների վերլուծության և հաշվարկումների հիման վրա:

Զորրորդ գլխում («Նշյունափոխություն») քննարկված են համաժամանակյա (սինխրոնիկ) նշյունափոխության երևույթները՝ դրաբարում: Հերթագայական և ազատ լծորգությունների հատորեն շարադրված տեսությունը գրքի ամենաարժեքավոր բաժիններից մեկն է: Շեշտի և այլ կարգի ձևաբանական երևույթների ազդեցությամբ մի նշույթի սղումը կամ փոխարինումը մի այլ նշույթով (հուր-հրորոյ, այրառն-արամբ, քոյր-քեռ, գործեցից-գործեսցես, ոմն-ուրումն-ումնմն, վեց-վեշտասան, հարկանեմ-հարի և այլն) տրված է ամենայն մանրամասնությամբ և գրաբարի նշյունափոխության վերաբերյալ մինչ այդ եղած նկարագրություններից ամենից լիակատարն է:

Երբի վերջին՝ հինգերորդ գլուխը («Մեսրոպյան այբուբենը և ուղղագրությունը») նվիրված է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ մեսրոպյան այբուբենի մեջ տառերի դասավորությունը, գրության ձևը (տառերի իրարից անջատ և ձախից աջ գրվելը) և տառածների ծագումը կամ աղբյուրները: «Ուղղագրություն» ենթագլխում բացատրված են հիմնականում Ու և Ի նշույթների գլուխյան հանգամանքները:

Այս աշխատությունն ամբողջական գաղափար է տալիս V դարի գրաբարի նշյունական համակարգի մասին: Դա մեր լեզվի դրավոր ձևով հայտնի սկզբնական վիճակն է, որի միջոցով

բացատրվում են հայերենի կրած նշյունական փոփոխությունները՝ նրա առանձին ճյուղավորումների մեջ հետագա դարերում: Հեղինակն ուսումնասիրելով լեզվի ընձեռած փաստերը և օգտագործելով լեզվաբանության արդի միջոցները, շատ անգամ քննության է ենթարկել Հյուբերմանի, Մեյնի, Աճառյանի տեսակետները՝ գրաբարի զանազան նշյունների վերաբերյալ: Մյուսիս քննության հիման վրա նշյունաբանական շատ խնդիրներ, հատկապես երկրաբանների V դարում ունեցած որակի, արտասանական առանձնահատկությունների հարցերը նոր լուսաբանություն են ստացել այս գրքում: Հեղինակի փաստարկները, դատողությունների ընթացքն այնպիսիք են, որ վստահելի ու համոզիչ են դարձնում նշյունական երևույթներին տված նրա բացատրությունները: Գիրքն աչքի է ընկնում նաև նրանով, որ հեռու է շատագրությունից, ձգձգվածությունից: Հեղինակը խուսափել է փաստերի ավելորդ, ոչինչ չասող կուտակումներից, որոնց փոխարեն տվել է ընդհանրացնող ու տիպական օրինակներ՝ դրանց մեջ ամփոփելով երևույթների բազմազանությունն ու օրինաչափությունները: Սրան պետք է ավելացնել և հեղինակի պարզ, անսեթևեթ ոճը, որ հաճելի է դարձնում գրքի ընթերցանությունը: Այս ամենի շնորհիվ գիրքը դառնում է հայ լեզվաբանության առաջնակարգ աշխատություններից մեկը:

Խնամքով գրված սույն աշխատության մեջկան, սակայն, մի քանի անհամոզիչ բացատրություններ և անճշտություններ:

Երկրաբանների մասին գլխում գրված է, թե «ձայնորդի ու ձայնավորի կապակցությունը մեկ միասնություն է կազմում և իմաստազատիչ դերով հանդես է գալիս որպես մեկ ամբողջական նշույթ» (էջ 104): Ըստ այսմ հեղինակը դրում է, թե հայ-հայեր և նման բառերի մեջ ոչ թե յ և Վ նշյուններն են հակադրվում, այլ այ և ա Վ նշյունական կապակցությունները, այսինքն այգ բառածների տարբերությունը ոչ թե յ և Վ նշյունների տարբերությունից է առաջանում, այլ այ և ա Վ նշյունական կապակցությունների տարբերությունից: Այս բանը հեղինակն ուզում է ապացուցել հետևյալ ձևով. նախ իր տեսակետին հակառակ ենթադրում է, թե հայր և հայր բառածների մեջ իմաստազատիչ դեր կատարում են յ և Վ ձայնորդները, իսկ ա ձայնավորն անտարբեր է իմաստի նկատմամբ: Բայց այս ենթադրությունը հեղինակի կարծիքով հերքվում է հետևյալ օրինակներով՝ այր-այր, խալս-խոլս, ալր-իլր, որոնց մեջ ի հակադրություն առաջին օրինակի (հայր-հայր) ձայնորդներն են նույնական և իմաստազատիչ դեր կատարում են ձայնավորները (էջ 104): Այստեղից հեղինակը

և գրականում է, թե հայր-հայր, իսայր-իսայր և նման բառերի մեջ իմաստագատիչ դեր կատարում են ոչ թե յ-ի և ո-ա հակադրությունները, այլ այ-աի, ոյ-այ և նման հնչյունակապակցությունները (էջ 104)։ Բայց այս ձևով կարելի է հնչյունների ամեն մի կապակցություն հակադրել մեկը մյուսին։ Օրինակ, այս ձևով կարելի է ասել, թե հասկ և հարկ բառերի մեջ ոչ թե ո և ր բաղաձայններն են հակադրվում իրար (բառերն իմաստով տարբերում իրարից), այլ աւ և սւ հնչյունակապակցությունները, որովհետև աւտ և րստ հակադրության մեջ էլ հակառակ առաջին օրինակի (հասկ-հարկ) բաղաձայնները նույնական են և ձայնավորներն են հակադրվում իրար։ Բայց այս դատողությունը ճիշտ չի լինի։ Այս և աւ երկրարբանների մեջ ձայնավորների, իսկ այ և ոյ երկրարբանների մեջ, ընդհակառակն, ձայնորդների նույնական լինելուց չի բխում երկրարբանների, «միասնություն, մեկ ամբողջական հնչույթ» լինելը։

Երկրարբաններն ամենից առաջ հնչյունների կապակցություն են (երկու ձայնավորի միավանկ կապակցություն), բաղադրություն երկու արտասանելի և լսելի հնչյունների, այն աստիճան լսելի, որ V դարում գրության մեջ արտահայտել են երկու տառով՝ այ, աւ, ոյ, եա, իւ, ինչպես հնչյունների ամեն մի ուրիշ կապակցություն։ Այնուհետև, այ և աւ երկրարբանների տարբերությունը միայն յ և Վ հնչյունների հակադրության մեջ է, որովհետև որքան էլ որ, օրինակ, հայր և տաւն բառերում ա ձայնավորը հաջորդ է և Վ, ինչպես և նախորդ հ և տ հնչյունների տարբերության պատճառով տարբեր ձևով արտասանվի, այնուամենայնիվ այդ տարբերությունը երկու դեպքում էլ մնում է անզգալի սովորական լսողության համար։

Այն հանգամանքը, որ բառավերջի աւ հնչյունակապակցությունը հոգնակի գործիականում -ից առաջ վերածվել է օ-ի՝ քաղաքաւ-քաղաքօք, տեղեաւ-տեղեօք, իսկ նույն հնչյունակապակցությունը հոգնակի ուղղականում -ից առաջ չի վերածվել օ-ի՝ անբաւ, բաւ, հաւ, նաւ չեն դարձել անբօ, բօ, հօ, նօ, դրաւ-ից հեղինակը եզրակացնում է, թե դրանց մեջ արտասանվել է ր ձայնավորը (նաւր, անբաւր, բաւր, հաւր)» (էջ 251, տե՛ս և էջ 120 և 122)։ Բայց այսպիսի (հաւօք) արտասանություն չի համապատասխանում հայերենի արտասանական առանձնահատկություններին և բառավերջի ու վանկակազմության վերաբերյալ հենց հեղինակի տված բացատրություններին։ Հեղինակը բառավերջի -ր համարում է ձայնորդ բաղաձայն և քաւ բառի -ր նույնական է համարում ծավ բառի վ-ի հետ (էջ 187) և ապա

նշում է, որ ձայնորդի կապակցությունը նաբաւոր է բառավերջում առանց ր ձայնավորի (էջ 249) և գրում է. «կէւ, աւաւ, հաւաւ, աւտեղ, դստեղ, երկիւն, նստեղ, ծով, աւաւ, ծախ, իմ, մտերիմ, քել և այլն, Բ-ից առաջ ր չեն ունեցել» (էջ 249)։ Եթե այդպես է, և եթե ծով բառն արտասանվում էր առանց ր-ի, ապա նախ քան էլ պետք է արտասանվեր առանց ր-ի, որովհետև այստեղ էլ բառավերջում նույն ձայնորդ-բաղաձայն կապակցությունն է բառավերջի վ-ն էլ նույնական է բառավերջի -ի հետ՝ րստ հեղինակի։ Բացի այդ, եթե Բաղաձայն գործիականը արտասանվել է առանց ր-ի (էջ 249), ապա նույն ձևով արտասանվել է արտասանվի նաև սաւ ուղղականությունը նույն հնչյունակապակցությամբ է վերջանում։ Ուրեմն նաև, անբաւ և նման բառերի արտասանությունն առանց ր-ի հայերենի հոգնակի ուղղականը օրենքներով բնական ու սովորական էր. այդպես է և րստ հեղինակի։ Այդ տիպի բառերի ո-ով արտասանությունը կարող էր լինել յուրիս միայն սուղաչափության՝ ոտնոտի վորի մեջ մեկ վանկ ավել ունենալու պահանջով, որ իրեն շնորհ էր կարող ազդեցություն ունենալ արձակ խոսքի բնական արտասանության վրա։ Բայց Բաղաձայն գործի է Բաղաձայն, իսկ նախ չի դարձել նօ։ Այն, որ նաւ, կաւ, անբաւ բառերի աւ կապակցությունը հոգնակի ուղղականում -ից առաջ օ-ի չի վերածվել, դրա պատճառը ոչ թե ր-ն է եղել, որ չի արտասանվել, այլ այդ բառերի եզակի ուղղականի ձևերի հնչյունական պատկերը։ Նաև բառի հոգնակի ուղղականը չէր կարող դառնալ նօ, որովհետև դրան խանգարում էր եզակի ուղղականի նաև արտասանությունը, որ չէր դառնում նօ։ Նօ արտասանությամբ բառի հնչյունական լուղղական պատկերը կաղավաղվեր և այլևս չէր հասկացվի, որ դա սաւ բառն է։ Նույն պատճառով կոիւ, պատիւ, անիւ, քիւ և նման բառերի իւ հնչյունակապակցությունը հոգնակի ուղղականում չի ստացել բաղաձայնից առաջ իւ երկրարբանի սովորական յու արտասանությունը և մենք այդ բառերի հոգնակիները՝ անիւ, կովիւ և այլն, ավանդական ձևով արտասանում ենք անիվ, կովիվ և ոչ թե անյու, կովյու։ Պետք է նկատի ունենալ նաև, որ նաւ, անբաւ, քաւ, ինչպես և անիւ, պատիւ, կոիւ բառերի այս եզակի ձևերն ընդհանրապես ավելի շատ գործածական են եղել, քան հոգնակի ուղղականի ձևերը։ Բացի այդ, աւ, իւ կապակցությունների հոգնակի ուղղականում -ից առաջ օ յու արտասանությամբ որոշ կարգի բառեր կարող էին սխալ հասկացվել ուրիշ բառերի անալոգիայով։ Պրինակ. վրաւ բառի հոգնակի ուղղականը վրօւ արտասանությամբ կարող էր տխալ կերպով

հասկացվել իրրև օրը բառի հոգնակի գործիական՝ ամօք, ազգօք, ֆաղսօք և նման բառածևերի անալոգիայով: Ի տարբերություն հիշյալ բառերի, ֆաղսֆա, ազգսֆ, ամսֆ և նման բառերի տա հնչյունակապակցությունը հոգնակի գործիականի ֆ-ից առաջ ընդհանուր պատմական հնչյունափոխությամբ կարող էր փոխվել օ-ի, որովհետև դրանով ֆաղսֆ, ազգ, ամ բառերի ուղիղ ձևերի արտասանական-լսողական պատկերները չեն փոխվում:

Գրախոսվող գրքի էջ 212-ում հեղինակը գրում է. «Հորանք ասելով պետք է հասկանալ երկու ձայնավորների միջև արտասանության ժամանակ երևան եկող թուլացիկ յ-ն, որ չէր գրվում և հնչույթային (իմաստագատիչ) դեր չէր կատարում», իսկ 209 էջում կարգում ենք. «Ժամանակակից հայերենում հորանքը գրավոր կերպով արտահայտվում է միայն ա և օ ձայնավորներից հետո (օր. երեխա-երեխայի, անգո. բայց զոյանալ և այլն)»: Այսպիսի բացատրություններով հորանքը փոխվել է իր հակադրության: Հայտնի է, որ լեզվաբանության մեջ «հորանք» (hiatus) կոչվում է ընդհանրապես երկու ձայնավորների հանդիպումը լինի մի բառի մեջ. թե մի բառի վերջում և հաջորդ բառի սկզբում» (Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 67), օրինակ, միասին, մեկր ասաց, զնալու եմ: Շատ լեզուներ, այդ թվում և հայերենը, թույլ չեն տալիս հորանք իրրև հնչյունների արտասանության տեսակետից աններդաշնակ կապակցություն: Հայոց լեզուն հորանքից խուսափում է զանազան միջոցներով. դրանցից է երկու ձայնավորների միջև մտնող յ-ն, օրինակ երեխա բառի սեռականում՝ երեխայի, որով հորանքը վերանում է բառի մեջ: Հորանքը արտասանական երևույթ է և գրությունն այստեղ նշանակություն չունի: Եթե մենք սիա-սի-ս, զնալու եմ բառերն արտասանում ենք մի-

յասին, զնալու յեմ, ապա դրանով վերանում է հորանքը այդ բառերի մեջ, իսկ եթե արտասանության համեմատ գրենք միյասին, զնալու յեմ, ապա գրության մեջ ևս վերացրած կլինենք հորանքը: Անուշադրության վրիպում պետք է համարել և հեղինակի դրածը թե. «Այդ թուլացիկ հնչյունը (յ-ն—Շ. Պ.), որ պայմանավորված է բացառապես արտասանական հանգամանքներով, հայ լեզվաբանական գրականության մեջ կոչված է հորանք, որ մենք էլ օդատագործում ենք» (էջ 209). այստեղ հորանք ասվածը հայ քերականագիտության մեջ կոչվում է ձայնակապ:

Սրանք մասնակի թերություններ են միայն, որ հագիվ նկատելի են գրքի հարուստ բովանդակության մեջ: Աշխատությունն ընդհանրապես իր մանրամասնությունների մեջ ևս հետևողական է և հիմնված է լեզվական երևույթների բազմակողմանի վերլուծության վրա: Այն էլ պետք է ավելացնել, որ թեպետ գրքի նյութը հին է, բայց նյութի քննության մեթոդներով նոր է ու այժմեական, որովհետև հարյուրամյակների ընթացքում ուսումնասիրության ենթարկված մեր հին լեզվի հնչյուններն այս գրքում ստացել են լեզվաբանության ժամանակակից մակարդակին համապատասխան դիտական բացատրություն, իսկ շատ երևույթներ էլ, առհասարակ, առաջին անգամ այս գրքում են քննության ենթարկվել (հնչույթների տարբերակիչ հատկանիշները, ենթահնչույթների հարաբերությունը, հերթագայական լծորդությունների որոշ փաստեր և այլն):

Այս աշխատությունը կարևոր ավանդ է հայագիտության ասպարեզում, ուստի և ցանկալի է, որ շուտով լույս տեսնեն նրա նաև մյուս մասերը:

Պ. ՇԱՐԱՐԵԱՆՅԱՆ

Г. А. АВЕТИСЯН, *Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение Советской власти*. Издательство АН Арм.ССР, Ереван, 1964, 488 стр., цена 1 р. 57 к.

Закавказье с точки зрения социально-экономических условий представляло собой единое целое. Многонациональный же ее состав и зрелостное размещение национальностей явились основой того, что все партии и другие политические организации имели свое общекавказское руководство.

Острая политическая борьба шла не в рамках отдельно взятых Грузии, Армении и Азербайджана, а в общекавказском масштабе. Следовательно, вряд ли можно согласиться с установками тех авторов, которые единое общекавказское классовое движение дробят по национальным территори-